ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի համայնք
ՀՀ, Շիրակի մարզ, ք.Մարալիկ,

Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 20

03 մարտի 2014 թվականի

ՄԱՐԱԼԻԿ ՔԱՂԱՔԻ ԲՆԱԿԻՉ ԽԱՉԱՏՈՒՐ ՍԱՄՎԵԼԻ ԲՈՒԼՈՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՐ. ՇԱՀԻՆՅԱՆ ՓՈՂՈՑՈՒՄ ԳՏՆՎՈՂ N 3 ՄԱՍՆԱՇԵՆՔԻ 2-ՐԴ, 3-ՐԴ ԱՐՏԱԴՐԱՄԱՍԵՐԸ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 37 հոդվածի դրույթներով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 25-ի N 2387-Ն որոշմամբ՝ Մարալիկ քաղաքի բնակիչ Խաչատուր Բուլոյանին պատկանող ք. Մարալիկ Հր. Շահինյան փողոցում գտնվող N 3 մասնաշենքի 2-րդ, 3-րդ արտադրամասերը վերահասցեավորելու նպատակով ***որոշում եմ***

Խաչատուր Բուլոյանին պատկանող ք. Մարալիկ Հր. Շահինյան փողոցում գտնվող N 3 մասնաշենքի 2-րդ, 3-րդ արտադրամասերը վերահասցեավորել ք. Մարալիկ Հր. Շահինյան փողոց, 4-րդ նրբանցք, N 25:

Քաղաքապետ՝ **ԱՐՏԱԿ ԳԵՎՈՐԳՅԱՆ**

2014 թ. մարտի 03
ք.Մարալիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի համայնք
ՀՀ, Շիրակի մարզ, ք.Մարալիկ,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 21

04 մարտի 2014 թվականի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿ ՔԱՂԱՔԻ ԲՆԱԿԻՉ ԱԲՐԱՀԱՄ ԳԵՎՈՐԳԻ ԱՊԻԿՅԱՆԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քննարկելով Մարալիկ քաղաքի Շիրակացի փողոց N 25 հասցեի բնակիչ Աբրահամ Գևորգի Ապիկյանի 01.02.2014 թվականի դիմումը, ինչպես նաև հաշվի առնելով այն հանգամանքը, որ Մարալիկ քաղաքի Շիրակացի փողոց 25ա հասցեի հողամասում 1985թ. կառուցվել է պահեստարան և 1981թ մառան, 1999 թվականին՝ բնակելի տանը կից կառույց և փաստացի հողատարածքի չափը կազմում է 0.05799 քմ, որից 97.7 քմ հողատարածքը համարվում է ընդհանուր օգտագործման և հանդիսանում է Գևորգ և Աբրահամ Ապիկյանների բնակարանները սպասարկող ճանապարհ, սակայն իրավունքը հաստատող փաստաթղթերը չեն պահպանվել, ուստի ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 37 հոդվածի դրույթներով <<Իրավունքը հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի վերաբերյալ>> Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի դրույթներով ***որոշում եմ***

1. Մարալիկ քաղաքի բնակիչ Աբրահամ Գևորգի Ապիկյանի /ծնված 28.02.1956թ./ ք. Մարալիկ, Շիրակացի փողոց, N 25ա հասցեում գտնվող հողամասում 1985թ. կառուցված պահեստարանի և 1981թ մառանի, 1999 թվականի բնակելի տանը կից կառույցի գույքային իրավունքները վերականգնել և ճանաչել նրա սեփականության իրավունքը:
2. Սույն որոշման մեկ օրինակը ներկայացնել Անշարժ գույքի կադաստրի տարածքային ստորաբաժանում՝ պետական գրանցում կատարելու նպատակով:
3. Ուժը կորցրած ճանաչել Շիրակի մարզի Մարալիկի քաղաքապետի 11 փետրվարի 2014 թվականի N 15 որոշումը:

Քաղաքապետ՝ ԱՐՏԱԿ ԳԵՎՈՐԳՅԱՆ